# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1150-Ա « 30 » սեպտեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ Ա.ՊՈՒՇԿԻՆԻ ԱՆՎԱՆ Հ.8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի N 5100-Ա որոշման N 2 հավելվածի 16-րդ կետը՝ 2025 թվականի հոկտեմբերի 6-ից 31-ը ներառյալ «Երևանի Ա.Պուշկինի անվան հ.8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացնել 2023-2025 թվականների հաշվետու ժամանակահատվածի համակարգի գնահատման աուդիտ:

2. «Երևանի Ա.Պուշկինի անվան հ.8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Ա.Դանիելյանին և Լ.Դանիելյանին:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**